ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/24

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Մարտիրոսյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հրավերում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավությունը ընձեռելու վերաբերյալ որոշումը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը՝ Հայտը հրավերի պահանջների չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

3. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը և 7-րդ կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ծանուցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

4. Թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր»:

Բողոքներ քննող անձի 07.05.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 15.05.2019թ.-ին և 24.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.05.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.05.2019թ.-ին:

1. <u>«Նաիրի Ինշուրանս» ԱԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

««Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ԱՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ուսումնասիրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրերով Հրավերով /այսուհետ՝ Հրավեր/ գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն 3/ և 29.03.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն 4/, գտնում է, որ դրանք կայացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/, Հրավեր մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Հրավերի II մասի Գնանշման հարցման հայտը պատրաստելու Հրահանգի 3.3. կետի համաձայն՝ «Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

Հրավերի հավելվածների համար սահմանված է դրանք չկնքվելու հնարավորություն, եթե դրանք հաստատվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այդպիսինն է նաև Հավելված թիվ 4 գնային առաջարկի ներկայումը:

Էլեկտրոնային ստորագրությունն ակտիվացնել կարելի է գրանցվելով ԷԿԵՆԳ-ի Սպասարկման համակարգում և կատարելով համապատասխան վճարում առցանց վճարման համակարգի կամ բանկային վճարման միջոցով, հակառակ պարագայում էլեկտրոնային ստորագրությունը չի լինի վավեր, ուստի և դրանով հաստատված ցանկացած փաստաթուղթ կհամարվի անվավեր փաստաթուղթ:

Համաձայն Հրավերի 7.19 կետի, Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատված փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Օրենքի 30 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում

բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերության կողմից սույն ընթացակարգով ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/01 բողոքի քննության ընթացքում պարզ դարձավ, որ Պատվիրատուին «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի /այսուհետ Կազմակերպություն/ կողմից ներկայացված հայտի բավարար դիտարկման համար ներկայացված փաստաթուղթն իրենից ներկայացնում է 06.03.2019թ-ին կազմված տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրված թիվ 262-Ա հրամանը, որով տվյալ կագմակերպությունն աշխատակցին տրվել է կազմակերպության անունից պետական գնումների ընթացակարգերին մասնակցելու ժամանակ կազմակերպության անունից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու իրավասություն:

Տվյալ գնման ընթացակարգի բոլոր փաստաթղթերի հավաստման համար կիրառվել է Կազմակերպության ներկայացուցիչ Արմինե Բադալյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը, որը Ընկերության կողմից բացահայտած տեղեկատվության համաձայն կիրառման պահի դրությամբ եղել է ոչ վավեր էլեկտրոնային ստորագրություն, մասնավորապես.

Ընկերության կողմից մեկ այլ գնման ընթացակարգի /թիվ ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/2 ծածկագրով մրցույթ/ շրջանակում www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվության /թիվ 2 Արձանագրություն/ ուսումնասիրման ժամանակ 07.05.2019թ-ին բացահայտվել է, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ Արմինե Բադալյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը ոչ վավեր է: Տվյալ տեղեկատվության տիրապետմամբ Ընկերությունը ձեռնարկել է միջոցներ և www.ekeng.am կայքի համապատասխան ծրագրային ապահովմամբ ստուգման է ենթարկել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-

16/19» գնման ընթացակարգի ժամանակ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ Արմինե Բաղալյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հավաստված փաստաթղթերի, Կազմակերպության կողմից ներկայացված փաթեթի, այդ թվում ներկայացված Հավելված թիվ 4 գնային առաջարկի փաստաթուղթը և պարզել, որ Կազմակերպության հայտը ստորագրված է ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի և տվյալ Կազմակերպության կողմից ներկայացված հայտը Պատվիրատուն պարտավոր էր դիտարկել հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժեր վերջինիս հայտը, որը սակայն չի իրականացվել:

Ստացվում է, եթե գնահատող հանձնաժողովը գործեր վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին համապատասխան, ապա պետք է մերժեր Կազմակերպության կողմից ներկայացված հայտը, որն ըստ էության ներկայացվել է Հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող վիճակում, նման լիազորություն չունեցող անձի կողմից, ինչի արդյունքում 1-ին տեղ կզբաղեցներ Ընկերությունը, որն, ըստ օրենքի խախտմամբ կազմված Արձանագրությունների, զբաղեցրել է 2-րդ տեղը:

Ստացվում է, որ Հանձնաժողովը թիվ 4 Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Կազմակերպության հայտը բավարար գնահատելով, գործել է ոչ իրավաչափ և խախտել է Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որն ամիջականորեն հանգեցրել է Ընկերության օրինական շահերի և իրավունքների խախտմանը, քանի որ վերջինս զրկվել է Օրենքի պահանջներին համապատասխան 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու օրինական հնարավորությունից:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հրավերում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավությունը ընձեռելու վերաբերյալ որոշումը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը՝ Հայտը հրավերի պահանջների չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

3. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը և 7-րդ կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ծանուցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային

օրվա ընթացքում Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

4. Թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր»:

Ներկայացնելով լրացում Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Բողոքի հիմքում ընկած փաստերի ապացուցման համար Բողոքին կից Ընկերության կողմից ներկայացվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀՇՁԲ-16/19» գնման ընթացակարգի ժամանակ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ Արմինե Բաղալյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հավաստված փաստաթղթի Հավելված թիվ 4 գնային առաջարկի ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու վերաբերյալ www.ekeng.am կայքի համապատասխան ծրագրային ապահովմամբ ստացված փաստաթղթային ապացույց:

Վերոնշյալ ապացույցից բացի Ընկերությունը 07.05.2019թ-ին հարցում է կատարել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին վերոնշյալ Հավելված թիվ 4 գնային առաջարկի վրա առկա էլեկտրոնային թվային ստորագրության վավեր լինելու հանգամանքի պարզման համար, որին ի պատասխան 08.05.2019թ-ին ստացել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի թիվ 631/08.05.2019 պատասխան գրությունը, որով հաստատվել է այն հանագամանքը որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ Արմինե Բաղալյանի էլեկտրոնային ստորագրությամբ հավաստված Հավելված թիվ 4 գնային առաջարկ փաստաթղթը չի պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.05.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Նաիրի Ինշուրանս» ԱԱՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, որևէ գրավոր կարծիք չի ներկայացրել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլոց, մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 26.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտը ստորագրվել էր Արմինե Բադալյանի կողմից, սակայն հայտին կցված չէր վերջինիս նման լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ, Հավելված 2.1-ում նշված չէր իրական շահառուի հայրանունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բադալյանին էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի 06.03.2019թ. թիվ 262-Ա հրամանը, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Մասնավորապես, վերոհիշյալ հրամանով 2019թ. մարտի 6-ից անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բադալյանին վերապահվել է լիազորություն՝ պետական գնումների ընթացակարգերին մասնակցելու ժամանակ Ընկերության անունից ներկայացվող փաստաթղթերը վավերացնելու նպատակով:

29.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, ինչի արդյունքում վերջինիս հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 31,995,000 ՀՀ դրամ, իսկ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդհանուր գնային առաջարկը՝ 27,000,000 ՀՀ դրամ, որով Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում հայտնել և հավաստել է, որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

Ի պատասխան «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 07.05.2019թ.-ի թիվ Ն/ՏՍ-39/2-3555 հարցմանը «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 08.05.2019թ.-ին թիվ 631 գրությամբ հայտնել է, որ *«Ձեր գրությանը կից ուղարկված փաստաթուղթը չի պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:»:*

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 20.05.2019թ.-ին արդեն թիվ 655 գրությամբ հավելել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 07.05.2019թ.-ի թիվ Ն/ՏՍ-39/2-3555 գրությանը կից ներկայացված փաստաթուղթը (Հավելված թիվ 4 «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը, ներկայացված «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից) 2019թ. մարտի 25-ին ստորագրվել է անվավեր հավաստագրով, ուստի չի կարող համարվել պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ... էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված

լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ նաև Հրավեր) II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3.3. կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հրավերի 1-ին մասի 7.19 կետով սահմանված են Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է

դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ կառավարության 01.03.2018թ. N 285-Ն որոշմամբ հաստատված «նույնականացման քարտում զետեղվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկումից բացի այլ տեսակի նյութական կրիչներում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն կամ «ԷԿԵՆԳ»), որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Նույն կարգի արդեն 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի

Հանրապետության կացության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի, հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորրագրի ներկայացումը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ կանոնադրության 7-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության խնդիրներն են մինչև կենտրոնացված հավաստագրման կենտրոնի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իրավաբանական անձանց և պետական մարմիններին էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայությունների տրամադրումը:

Վերոնշյալ նորմերի դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործումը թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչը չի ունեցել օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրության վավեր հավաստագիր, որի բացակայության պայմաններում ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը պետք է դիտարկել ոչ պատշաճ, հիմք ընդունելով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կողմից թիվ 631 և թիվ 655 գրություններով տրված տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր

կնքելն արգելելու՝ Ընկերության բողոքով ներկայացրած պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, մերժման ենթակա, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բողոքի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարկվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելը պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները կասեցվում են, հետևաբար վերջինիս կողմից հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելն օրենքի ուժով արգելված է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի, որպես ՀՀ ռեզիդենտ կազմակերպության, ներկայացուցչի կողմից ստորագրվել է անվավեր հավաստագրով, ուստի չի կարող համարվել պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթ, իսկ որի՝

գնային առաջարկի ստորագրության բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա էր մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակիորեն.

Պարտավորեցնել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել 26.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հրավերում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավությունը ընձեռելու վերաբերյալ որոշումը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

2. Դադարեցնել 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը՝ Հայտը հրավերի պահանջների չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

3. Դադարեցնել 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը և 7-րդ կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ծանուցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ